Եղիշե Չարենց

Երբ չկայիր կարծես դու՝ դղյակում հոգու

Երբ չկայիր կարծես դու՝ դղյակում հոգու
Անշշուկ քնած,
Քո՛ւյր, իմ հոգին, աստղային, որպես նինջը քո
Կապույտում մնաց:
Պատուհանից դղյակի ես տեսնում էի
Երկինքները բիլ:
Շրթերիս մեջ, հոգուս մեջ մի խոսք ունեի.
Քո՛ւյր, քնի՛ր, քնի՛ր...
Միայն զգում էի ես՝ լուռ, տրտում այնպես՝
Որ ամեն ինչում
Քո լուսավոր էության հարազատ ու հեզ
Կապույտն է շնչում:
Եվ չկայիր կարծես դու՝ դղյակում հոգու
Անշշուկ քնած:
Քու՛յր, իմ հոգին, աստղային, որպես նինջը քո
Կապույտու՛մ մնաց: